է գեղարվեստական բացառիկ շնչով, և Դավրիժեցու պատմագրքի լավագույն դրվագներից է ընդհանրապես: Սա բավականին ընդարձակ ու ներքին ճյուղավորումներով հատկանշվող մի պատմություն է, որի առանցքում, սակայն, գետն անցնելն է: Զրույցի նախադրությունում ներկայացվում են այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում գետն անցնելու: Պարսից զորքը քշելով տանում էր հայ գաղթականներին, բայց մյուս կողմից էլ մոտենում էր Օսմանցիների սարդար Ջղալօղլին: Շահ-Աբասը գիտեր, որ իրենց զորքերի հանդիպումը վատ կվերջանա պարսիկների համար և «դարձուցեալ զերեսս իւր չուեաց ամենայն բանակաւն իւրով հետևեալ զհետ բանակի ժողովրդեանն դէպ յերկիրն Պարսից» (էջ 79): Օսմանցիների զորքը հետևում է պարսիկներին: Դավրիժեցին տպավորիչ պատկերավորությամբ է ներկայացնում այդ տեսարանը. «Եւ եղեն երեք բանակք մեծամեծք և անհունք. առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդ՝ բանակն Օսմանցւոց» (էջ 79): Ճանապարհին շտապությունից պարսիկները դաժան ծեծուջարդի են ենթարկում անպաշտպան ժողովրդին, իսկ երբ գետն անցնելու հարկադրանքն է մեջտեղ գալիս, պատկերը դառնում է առավել սարսափազդու: Դավրիժեցին այս դրվագների վկայագրություններում դիմում է պատկերավորման տարաբնույթ հնարանքների՝ գրեթե տեսանելիորեն իրական ներկայացնելով տեղի ունեցածը. «Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ՝ զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և յետուստ՝ զսուրն Պարսից, որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ո՛չ գտանիւր. և առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ: Եւ ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ գոչեցուցանէին ուժգին աղաղակաւ. իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր» (էջ 80):